

ՀՀ-ՈՒՄ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆՎԱԶՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՓՄՁ-ՆԵՐԻ ԲԱՐԳԱՎԱՌՈՒՄ

Գագիկ Մակարյան

*Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ*

ՀՀ-ում, ինչպես նաև խորհրդային նախկին բոլոր երկրներում առկա է սովերային տնտեսություն, որը արտահայտվում է մի քանի եղանակով: Դրանցից այդ երկրներում ավելի տարածված են 2 ձևերը՝<sup>1</sup>

1. Զգրանցված տնտեսություն,
2. Ոչ ֆորմալ տնտեսություն:

Առաջինի դեպքում գրանցված կազմակերպությունը կարող է ունենալ զգալի ծավալով չգրանցված շրջանառություն, որը թաքցվում է, կազմակերպությունը վարում է «երկակի հաշվապահություն», երբ չգրանցված միջոցների և ակտիվների հաշվառումը ֆորմալ տարբերակից տարբերվում է նրանով, որ պետական մարմինների համար փակ է, այսինքն տեսանելի չէ: Դրա շնորհիվ կազմակերպությունները կարող են նախատեսվածից քիչ մուծել ԱԱՀ և եկամտային հարկը կամ շրջանառության հարկը: Այսպիսով, իրականում նվազեցվում են կազմակերպության իրական եկամուտները: Ի դեպ այս տարբերակով նաև եղածից քիչ են ներկայացվում ներմուծվող ապրանքների քանակները (եթե ապրանքները ներմուծող ընկերություն է կամ և ներմուծող է և նաև միաժամանակ արտադրող) կամ ներմուծվող ապրանքները մաքսակետում կձևակերպվեն այլ ապրանքային խմբերի տակ, որոնց նկատմամբ մաքսատուրքը ցածր է և որոնց շնորհիվ ավելի փոքր գումարներ են մուծվում մաքսատուրքի և ԱԱՀ տեսքով:

Երկրորդ տարբերակում գործում է օրենքները շրջանցելու տարբերակը, երբ կողմերի բանավոր համաձայնությունների հիման վրա չեն կատարվում օրենքներով նախատեսված ձևակերպումները: Այսպիսի իրավիճակում հաճախ հայտնվում են սոցիալապես խոցելի խմբերը, որոնք չեն գտնում ոչ ֆորմալ աշխատավարձի նկատմամբ այլընտրանքային լուծումներ: Հատկապես սոցիալական պաշտպանության ծրագրերից օգտվելու դեպքում:

Այս պարագայում էական նշանակություն ունի ՀՀ-ում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը, որը հատուկ է նոր ստեղծվող պետություններին և ավելի քիչ արդիականացված հասարակություններին: Այս տարբերակների դեպքում հաճախ օգտագործում են «լողոված

<sup>1</sup> Теневая экономика в Армении

Тракт Микаелян. Ереван 2016, Институт Кавказа. УДК 339.19

օրինականություն» տերմինաբանությունը, երբ իրավական մեխանիզմները բավարար չեն տնտեսական և քաղաքական հարաբերությունները հասարակության շրջանում կարգավորելու համար: Արդյունքում աստիճանաբար վտանգվում են և նսեմանում պետական և հասարակական տարբեր ինստիտուտները: Լողողված օրինականությունը հաճախ արտահայտվում է մի քանի տարբերակով, ինչպիսին են օրինակ՝ օրենսդրական նորմերի բացակայությունը, որոշ օրենքների կամ դրանց հոդվածների կրկնելիությունը կամ լիազորությունների խաչվածությունը (իրար հատվելը): Տարբեր պետական մարմինների լիազորությունների կրկնվելը, թույլ օրենսդրական բազան, օրենքի ուժի բացակայությունը, օրենքի սելեկտիվ կիրառությունը (որոշ տնտեսվարողների կամ անձերի համար գործում է արտոնյալ վիճակ): Օրենքին զուգահեռ գործող սխեմաների առկայությունը կամ պատվիրված օրենքներ մշակելը որոշ փոքր խմբերի կամ անհատների համար:

ՀՀ-ում ստվերային տնտեսությունը խորը արմատներ է գցել կոռուպցիայի շնորհիվ: Կոռուպցիան և ստվերային տնտեսությունը երկվորյակ զույգ են և առաջացնում են անհավասար մրցակցություն բիզնեսի համար<sup>2</sup>: Ձեռնարկությունների 38%-ի համար դա մրցակցության հիմնական աղբյուրն է, հատկապես դա իրենց վրա զգում են փոքր ու միջին ձեռնարկությունները (ՓՄՁ), որոնք դրան դիմակայելու համար հարկադրված են իրենց գոյատևումն ապահովել ստվերային աշխատուժի կամ որոշակի ստվերային շրջանառության միջոցով, վճարելով ավելի ցածր հարկեր, քան նախատեսված է:

ՀՀ-ում ստվերային տնտեսության դեմ պայքարն արդեն ունի շուրջ 10 տարվա պատմություն: Մակայն հաջողությունները այդ ժամանակահատվածում եղել են փոքր և վերջին տարիներին այն չի նվազել և առաջացրել է տնտեսության մեջ տարբեր անոմալիաներ: Տարբեր միջազգային կառույցների գնահատականներով (ԱՄՀ, ՀԲ) ստվերային տնտեսությունը ՀՆԱ-ի նկատմամբ գտնվում է 30-50%-ի միջակայքում: Իսկ աշխատուժի նկատմամբ ոչ ֆորմալ ցուցանիշը որոշ տնտեսական ոլորտներում գտնվում է 60-80%-ի միջակայքում: Ընդ որում նախորդ տարիներին ՀՀ կառավարությունը ուշադրությունը սևեռել էր հարկային վարչարարության, մրցունակ տնտեսության ձևավորման և կուտակային թոշակային համակարգի ստեղծման վրա որպես պայքարի մի տարբերակ: Նշված ուղիներով ՀՀ կառավարությունը ձգտել է սահմանափակել ստվերային տնտեսության հնարավոր զարգացումները, սակայն վերջինս կրում է արդեն համակարգային բնույթ: Այս համակարգային վիճակը ձևավորվել է տարիների ընթացքում աստիճանաբար, երբ խոշոր բիզնեսը սկսեց ինտեգրվել իշխանություններին, այն սկսեց մխրճվել պետական ինստիտուտների մեջ, միաժամանակ այդ նպատակով սկսեցին օգտագործվել կուսակցությունների հովանավորությունները: Պատահական չէ, որ ազգային ժողովում բիզնեսի

<sup>2</sup> «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» 2016թ, ISBN: 978-2-831123-5 (print), ISBN: 978-92-2-831124-2(web pdf), [www.employers.am](http://www.employers.am)

ներկայացուցիչների թվաքանակը որոշակի ժամանակահատվածում գերակշռել է մյուսների թվաքանակին: Արդյունքում, այդ բիզնես-պատգամավորների զգալի մասը իր դիրքը, անձեռնմխելիությունը և կապերն օգտագործել է սեփական բիզնեսի խթանման, պատվիրված օրենքների մշակման և քվեարկման կամ պետական գնումների մրցույթներում հաղթելու և այլ նպատակների համար: Դրա փոխարեն միկրո և փոքր բիզնեսը անընդհատ գտնվել են որոշակի ճնշման տակ, քանի որ մյուսների չվճարված հարկերի և պարտավորությունների կատարումը ընկել է միկրո և ՓՄ ձեռնարկությունների ուսերին: Փոքր բիզնեսը սպառել է սեփական միջոցներով զարգանալու հնարավորությունը, վարկերի հասանելիությունը դժվար խնդիր է նրանց համար<sup>3</sup>, պետական գնումների մրցույթներին դժվարությամբ են մասնակցում և հաղթում (պահանջները և փաստաթղթերը խրթին են), ստացվել է այնպես, որ միկրո և փոքր ձեռնարկությունները գոյատևման խնդիր ունեն և այդ պատճառով հարկադրված են կամ պահել չձևակերպված աշխատուժ կամ ունենալ սովերային շրջանառություն: Այսպիսով խոշոր բիզնեսը ներգրավվելով պետական պաշտոնյաների հետ ոչ ֆորմալ հարաբերություններում ձեռք է բերել հարստանալու լրացուցիչ հնարավորություններ:

Այսօր ՀՀ-ում սոցիալական խնդիրները սրվել են և դարձել ազդեցիկ ու որոշիչ, օրինակ՝ աղքատությամբ և պաշտոնական գործազրկությամբ ՀՀ-ն ունի ավելի վատ ցուցանիշներ<sup>4</sup> քան տարածաշրջանի մի շարք երկրներ (օրինակ՝ Վրաստան, Թուրքիա, Իրան, ՌԴ և այլն):

Դրա արդյունքում տնտեսական ռեֆորմներն ուղղված կոռուպցիայի և սովերի դեմ պայքարում, երբեմն առևտրով զբաղվող միկրո ձեռնարկությունների շրջանում առաջացնում են հուզումներ կամ դժգոհություն, հատկապես դրամարկղային մուծումների չեկերի (ՀԴՄ) և առևտրի փաստաթղթավորման պահանջների նկատմամբ: Այդ գործընթացը նպատակ ունի բացահայտել խոշոր ներկրողների իրական շրջանառությունը, քանի որ միկրո ձեռնարկությունները գնում են նրանցից, սակայն այս մեթոդաբանությունը հանդիպում է դիմադրության, քանի որ միկրո ձեռնարկությունները հազիվ է ստանում եկամուտներ և դա հաճախ գոյատևման խնդիր է: Ստացվում է, որ սովերի կրճատումը կարող է առաջացնել լրացուցիչ սոցիալական խնդիրներ և հետևաբար, կարող են առաջանալ իրավիճակներ, երբ տնտեսական դրական ռեֆորմները կհակակշռվեն սոցիալական խնդիրներով: Այսպիսով ՀՀ-ում սովերային տնտեսության կրճատումը պետք է իրագործվի միայն գործարար միջավայրի արագ բարեփոխման և օրենքի ուժի գերակայության պայմաններում, ուժեղ քաղաքական կամքի առկայությամբ: Բոլորը հավասար են օրենքի առաջ, այս մոտեցման շրջանակում կարևոր են թափանցիկ և հավասարաչափ ստուգումները բոլորի նկատմամբ: Բացի այդ պետական

<sup>3</sup> Национальная статистическая служба Армении. 2016г. Статистический ежегодник Армении 2016 Ереван: НССРА

<sup>4</sup> Գ. Մակարյան տարբեր ՁԼՄ-ներով արված վերլուծություններ

գնումները պետք է լինեն թափանցիկ հաղթողների և նրանց կողմից ներկայացրած առաջարկների նկատմամբ: ՀՀ-ում գործող ՓՄՁ-ները ՀՀ կառավարությունից ակնկալում են ստվերի կրճատում<sup>5</sup>: ՀՀ-ն ստվերի կրճատման ևս մի կարևոր ուղի կարող է դարձնել արտահանման խթանումը: ՀՀ-ն փոքր բնակչությամբ երկիր է և մեծ սպառում չի ապահովում, հետևաբար գլոբալ շուկաներ դուրս գալը կապահովի նոր եկամուտներ և ձեռնարկությունների կայուն զարգացում: Դրան հասնելու համար ձեռնարկությունները կձգտեն դառնալ նորարարական, որպեսզի ունենան մրցունակ արտադրանք և մրցունակ մենեջմենթ: Հետևաբար արտադրողականության բարձրացման դեպքում կառաջանան լրացուցիչ եկամուտներ և հնարավորություններ: Իսկ նորարարական կազմակերպությունները կարիք չունեն ունենալու ստվերային ցուցանիշներ և առավելապես նրանք, ովքեր արտահանողներ են<sup>6</sup>: Այսպիսով արտահանման միջոցով կլուծվեն միաժամանակ մի քանի խնդիրներ: Մինչ այժմ խոշոր բիզնեսի մի մասը զարկ է տվել ներմուծումներին, քանի որ չձևակերպված ներմուծման ապրանքների գումարները էական ֆինանսական միջոցներ առաջացրին հարստանալու համար, թե ներմուծողների, թե պետական այրերի համար, աստիճանաբար դրա շնորհիվ ներմուծման ծավալներն աճեցին և տեսականին ընդլայնվեց, որոնք անհավասար մրցակցային պայմաններում թուլացրեցին ներքին արտադրողներին, հանգեցնելով այն փաստին, որ գոյատևման համար վերջիններս նույնպես որոշակիորեն ստվերային տնտեսությանը զարկ տալ: Այսպիսով պատճառահետևանքային շղթան էլ ավելի խորացրեց ստվերային տնտեսությունը և այն այժմ պարուրել է ՀՀ տնտեսությանը: Այսպիսի իրավիճակում դժվարացել է օտարերկրյա ներդրումների ներգրավումը: ՀՀ տնտեսությունը կարիք ունի բիզնեսի նոր մշակույթի թափանցման և այս գործընթացներում կարող է որոշիչ դերակատարություն ունենալ հայկական հին ու նոր սփյուռքը իր շարունակական ներդրումներով: Մյուս կողմից կարևոր դերակատարություն ունեն աշխատավորները, քաղաքացիական հասարակությունը: Նրանք իրենց գրագիտության շնորհիվ կբարելավեն աշխատանքային հարաբերությունները և հակակշիռ ստեղծեն օրենքի շրջանցման կամ թույլ տեղեկատվության և ընկալումների նկատմամբ, նպաստելով թափանցիկ աշխատանքային և բիզնես հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև դեմոկրատական թափանցիկ ընտրություններին, որոնց շնորհիվ նախապես կոռուպցիոն մտադրություններով օժտված անձերի թափանցումը պետական և համայնքային կառույցներ կնվազեն և մեկ օր ՀՀ-ում կձևավորվի իր իրավունքները գիտակցող և սեփական շահերը պաշտպանող հանրություն:

<sup>5</sup> Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ. «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները. ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մակրո և միկրո մակարդակներում» Հայաստան 2015

<sup>6</sup> Գ. Մակարյան տարբեր ՁԼՄ-ներով արված վերլուծություններ

Կոռուպցիայի և ստվերի դեմ ՀՀ ներկա Կառավարության պայքարը կարճ ժամանակում հանգեցրեց ստվերային աշխատուժի զգալի կրճատման, որն ակնհայտ դարձավ 2018թ-ի երկրորդ կիսամյակում տասնյակ հազարավոր աշխատատեղերի քանակի ավելացմամբ: Ստվերի և կոռուպցիայի խիստ նվազեցումը հանգեցրեց մոնոպոլիաների էական վերացման և արդար մրցակցային լրացուցիչ նախադրյալների ստեղծման փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար: Բացի այդ նկատվում է, որ ընկերությունները ձգտում են ավելի հաճախ օգտվել մասնագիտական տարբեր ծառայություններից, իրենց մրցակցային հնարավորությունները շուկայում բարելավելու համար: Հատկապես այդպիսի ծառայություններ են հանդիսանում հաշվապահական հաշվառումը, իրավաբանական և բիզնես խորհրդատվությունները: Սա հանգեցնելու է այն բանին, որ հատկապես խոշոր ընկերությունների շուրջը ձևավորվելու է նրանց սպասարկող ՓՄՁ-ների մեծաքանակ խումբ: ՀՀ ներքին շուկայում կրթարձրանա պահանջարկը արդյունավետ կառավարման, որակյալ աշխատուժի, կազմակերպությունների արդիականացման նկատմամբ: Այս բոլորը էականորեն կխթանեն ՀՀ-ում տնտեսական ակտիվության բարձրացումը և տնտեսական մրցունակությունը, կավելանան կայուն ձեռնարկությունների թվաքանակը, որը կհանգեցնի համախառն ներքին արդյունքում և զբաղվածության բնագավառում ՓՄՁ-ների դերակատարության բարձրացմանը: Բացի այդ արագ զարգացող տնտեսության պայմաններում կմեծանա պահանջարկը բիզնեսի կարիքներին համապատասխանող կրթական համակարգի նկատմամբ: Աշխատուժի նկատմամբ լրացուցիչ պահանջարկը կխթանի երիտասարդության և կանանց զբաղվածությունը ՀՀ-ում:

## SUMMARY

This article presents the most common ways of shadow economy in Armenia. The main reasons for the emergence and maintenance of the shadow economy are justified. Several ways to reduce shadow economy have been proposed.

President of Republican Union of Employers of Armenia

Gagik Makaryan

## АННОТАЦИЯ

В этой статье представлены наиболее распространенные виды теневой экономики в Армении. Обоснованы основные причины возникновения и поддержания теневой экономики. Предложены некоторые пути сокращения теневой экономики.

Президент Республиканский союз работодателей Армении

Гагик Макарян

## Օգտագործված գրականության ցանկ

1. Теневая экономика в Армении  
Тракт Микаелян. Ереван 2016, Институт Кавказа. УДК 339.19
2. «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» 2016թ,  
ISBN: 978-2-831123-5 (print), ISBN: 978-92-2-831124-2(web pdf), [www.employers.am](http://www.employers.am)
3. Национальная статистическая служба Армении. 2016г. Статистический ежегодник  
Армении 2016 Ереван: НССРА
4. Գ. Մակարյան տարբեր ՁԼՄ-ներով արված վերլուծություններ
5. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ. «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները. ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մակրո և միկրո մակարդակներում»